



ԱՇԴ ԶԻՆԱՆԻ

ԱՂԵՔՍԱՆԴՐ ՄԱԿԵԴԱՆՈՍ

(ԱՂԵՔՍԱՆԴՐ ՄԾԾ)

Աղէքսանդր եւ իւր հայրը *) .— Աղէքսանդր Մակեդոնոսի մայրը սիրահարուել է գերի բռնուած մի թագաւորի վրայ: Սա նշանաւոր կախարդ լինելով՝ թագուհու մօտ գնալիս միշտ վիշապի կերպարանք է ընդունել, որպէսզի կարողանայ թագցնել իրենց սիրային յարաբերութիւնը՝ որի արգասիքն եղել է Աղէքսանդրը: Սակայն հետզհետէ սկսել են կասկածել, ուստի և այս թագաւոր-կախարդը ստիպուել է հեռանալ թագուհուց: Նա եկել, բնակութիւն է հաստատել Մասիսի ստորոտում, ուր շարունակել է գործադրել իւր կախարդութիւնը:

Շատ տարիներից յետոյ՝ երբ Աղէքսանդրն արդէն չափահաս դարձած՝ անցել է Հայաստանով իւր արշաւանքները կատարելու, լսում է այդ կախարդի համբաւը և գալիս է մօտը՝ ցանկանալով դուշակել տալ իւր ապագայ արշաւանքների ելքի մասին: Բայց նախ քան այդ՝ ցանկանում է փորձել կախարդին և հարց է տալիս՝ թէ մեծ ձեռքից է նա մեռնելու:

— Ես իմ որդու սրիցն եմ մեռնելու, պատասխանում է կախարդը, բայց ւախճան հաստատուն կերպով, որ Աղէքսանդրը զայրանալով սրա անդքան հաստատուն կերպով խօսելու վրայ՝ հանում է սուրը և նրա կուրծքը խրում:

— Գուշակութիւնս արդէն կատարուեց, ասում է կախարդը հոգին աւանդելով, ես մեռնում եմ իմ որդու սրից, դու ես իմ որդին:

*) Գտածն էն ինձ Յանեսոս աշուղ Սաքելը և մի քանի ծնրուկներ:

Գ. Միսա 2հրազ թարգմանելով այս աւանդութիւնները իմ ձեռագրից 1900. կարգացել է Փարիզի Գրքների պատմութեան համաժողովում, որ և ապուել է նոյն համաժողովի հրատարակութեան մէջ: Նոյնը ես թարգմանել եմ առեւերէն, որ զեանդուած է Ивнѣотіа Каннавскаго Отдѣла Имп. Русс. Геогр. Общ. 1901 г. № 3 մէջ:

Աղէքսանդրի գլխի եղջիւրը.—Աղէքսանդրը գլխին մի եղջիւր ունէր, որ մարդկանցից սաստիկ թագցնում էր, ուստի և մարդերը խուզելիս սափրիչին սպանել էր տալիս: Այսպէս մէկ-մէկ գլխատել տալով մնացել էր միայն մի սափրիչ, որը, սակայն, կարողացաւ գլուխն ազատել, երդուելով որ ոչ ոքի չի յայտնիլ այդ զազանիքը: Սակայն, մի քանի օրից յետոյ այդ սափրիչի փորն սկսեց ուռչիլ, սիրտն ուզում էր մինին տեսլ այդ զազանիքը, միայն վախենում էր գլխից: Բայց փորն էլ աւելի ու աւելի ուռչում էր: Ճարահատուած մի օր գնաց մի դաշտ և կռահալով մի ջրհորի վրայ, ասաց. «Աղէքսանդրի գլխին եղջիւր կայ»: Իսկոյն փորի ուռուցքը սկսեց իջնել և սիրտը հանգստացաւ: Բայց այդ ջրհորի մէջ մի եղեգն բուսաւ, որը կտրեց մի հովիւ և սրինգ շինեց, և երբ սկսեց ածել, սրինգը պարզ և որոշ սկսեց կրկնել. «Աղէքսանդրի գլխին եղջիւր կայ»: Այնպէս պատահեց, որ Աղէքսանդրն այդտեղից անցաւ և լսեց այդ խելոյն իմացաւ, թէ ով է տարածել այդ խորին զազանիքը և կանչելով երդմնագանց սափրիչին՝ հրամայեց գլխատել նրան, թէ և նա աշխատում էր արդարանալ, պատճառարանելով թէ միայն ջրհորին է տեսել:

Աղէքսանդրը եւ իւր քոյրը.—Աղէքսանդր Մակեդոնոսը կամեցել էր գնալ անմահական ջուր բերելու, որպէսզի խմի ու անմահանայ: Եւ որովհետեւ այդ անմահական ջրի տեղը միմիայն ծերունիները կարող էին իմանալ, ուստի սկսում է որոնել մի խելացի ծերունի: Սակայն երկար ժամանակ չի կարողանում գտնել, որովհետեւ այդ ժամանակի սովորութեան համեմատ ծերունիներին քթոցի մէջ էին դնում և գլորելով սպանում: Վերջապէս մի երիտասարդ ներկայանում է Աղէքսանդրին և նրանից խոստումն անելով որ չի պատժելու իրեն, խոստովանում է, թէ ինքը, սաստիկ սիրելով իւր ծերունի հօրը՝ չէ սպանել նրան և պահել է մի ջրհորի մէջ:

Աղէքսանդրն իսկոյն իւր մօտ է բերել տալիս նրան և հետըն ասած գնում մութ աշխարհը, որից անցնելով պիտի մտնէին լուս աշխարհը, ուր գտնուում էր անմահական ջուրը: Սակայն այստեղ նրանք սկսում են երկմանել, թէ ի՞նչպէս անեն, որ վերադարձին կարողանան իրենց երկրի ճանապարհը գտնել: Ոմանք առաջարկում են գնացած ճանապարհի վրայ յարդ ածել, որ նրա հետքով վերադառնան, ուրիշները ասում են, որ աւելի լաւ է թակ կապել ու ծայրը բռնած գնալ: Իսկ ծերունին խորհուրդ էր տալիս մաստակ ձիերի վրայ նստած անցնել այդ ճանապարհը, միայն սրանց քուռակներին իրենց հետ չը տանել, այլ թողնել

իրենց երկրի ճանապարհի վրայ, որպէսզի ձիերը վերադառնան, դաննն իրենց քուտակներին, և այսպիսով բերնն իրենց այն տեղը, որտեղից մեկնել էին:

Աղէքսանդրը հետեւում է ծերունու խորհրդին, մատակ ձիերի վրայ նստած անցնում են մութ աշխարհը, գտնում անմահական ջրի աւազանը, լցնում մի սրուակի մէջ և հետներն առած վերադառնում: Մութ աշխարհից անցնելիս ծերունին ասում է. Այստեղ եղած քարերից ուզում էք վերցրէք, ուզում էք մի վերցրնէք, վերցնողն էլ, չվերցնողն էլ ստրկանալու են: Ոմանք վերցնում են, ոմանք ոչ, սակայն վերադարձին բոլորն էլ ստրկանում են, որովհետեւ այդ քարերը ոչ թէ հասարակ, այլ անգին են եղել, վերցնողն ստրկացել է թէ ինչի՞ շատ չէ վերցրել, իսկ չը վերցնողն էլ ստրկացել է, թէ ինչի՞ դոնէ մի քանի հատ չէ վերցրել:

Աղէքսանդրն անմահական ջուրը, առանց մի կաթիլ անգամ խմելու, դնում է պահարանը, պահում: Քոյրը իմանալով այդ ջրի նշանակութեան մասին, գալիս բաց է անում պահարանը և բոլոր ջուրը խմում: Աղէքսանդրը վրայ է գալիս և սուրը քաշած վերան յարձակում: Սա երկիւղից թռչում է ասն առաջ տարածուած ծովի մէջ և այնտեղ ապաստանում: Եւ դեռ մինչև այժմ էլ նա կենդանի է, ու տիրապետում է ծովի խորքին, միայն վախենում է դուրս գալ, որովհետեւ կարծում է, թէ եղբայրն էլ նոյն ջրից խմել է ու անմահանալով շարունակում է տիրապետել աշխարհին, ապա թէ ոչ ինքը դուրս կը դար ծովի խորքից և կը տիրէր ամբողջ աշխարհին, որովհետեւ ինքն էլ իւր եղբոր պէս հզօր է և քաջ:

Աղէքսանդրը եւ ծինները.—Աղէքսանդրը այս միևնոյն ծերունու խորհրդով կուպր է լցնում ծովի երեսին և կրակ տալիս, որպէսզի ձկներն ստիպուած լինին հպատակուիլ իրեն և հարկ վճարել: Եւ յիշուի, ձկները հպատակում են և իբր հարկ մի կտոր խմոր են տալիս, ասելով որ զգուշութեամբ եփէ և ուտէ: Աղէքսանդրը յանձնում է այդ խմորը մի հացթուխի, պատուիրելով, որ մեծ զգուշութեամբ եփէ և իսկոյն իրեն բերէ: Բայց որովհետեւ զոգոգոգած բանի գլխին սառանան կանգնած է լինում, ուստի և խմորը վառում է: Հացթուխը գլուխը կորցրած տալիս է այդ վառուած հացը այդ միջոցին իրեն ձեռք մեկնած աղքատ ծերունուն և ինքը մի ուրիշ խմորից հաց թխելով ներկայացնում Աղէքսանդրին: Երբ աղքատ ծերունին ուտում է վառուած հացը, յանկարծ երիտասարդանում է և սկսում է հասկանալ թռչունների, ծառերի, ծաղիկների լեզուն, ու դառնում է բժիշկների բժիշկ՝ հաշակաւոր Լոխմանին:

Աղծքսանդրի մահը.—Երբ Աղէքսանդր Մակեդոնոսը ծնուեց, իսկոյն ոտի ելաւ, և վազեց սննեակի երեք պատերը բռնեց, բայց երբ ուզում էր չորրորդն էլ բռնել՝ հրեշտակն Աստուծու հրամանով խփեց ոտին և թոյլ չտուեց: Եւ երբ նա մեծացաւ ու թագաւոր դարձաւ, տիրեց աշխարհի երեք կողմին, միայն չորրորդին չկարողացաւ յաղթել:

Նա հարկ դրեց ծովի ու ցամաքի վրայ, ծամաքը հեշտութեամբ հնազանդուեց, բայց ծովը չէր կամենում հարկ տալ: Ուստի Աղէքսանդրը կուպր ածել տուեց ծովի վրայ և կրակ տուեց: Ծովի ձկները զարոււրեցան և մեծ քանակութեամբ անգին քարեր դուրս ածեցին, իբր հարկ, սակայն Աղէքսանդրը շարունակ աւելի պահանջելով չղաղարեցրեց իւր հալածանքը: Այս ժամանակ ծովի միջից մի ձեռք մեկնուեց, որ հինգ մատները պարզած մնաց կանգնած: Աղէքսանդրը իւր քառասուն իմաստուններին հարցրեց, թէ ի՞նչ է նշանակում այդ ձեռքը և երբ երեսուն և իննը չկարողացան բացատրել, հրամայեց բանտարկել: Քառասներորդը խորհուրդ տուեց թագաւորին գիմել Փրիզոնին, որ

Աչքերը շրջիկ,

Ոտները ծուռտիկ,

Մէջքը բութիկ,

մի իմաստուն էր:

Աղէքսանդրը կանչեց սրան և հարցրեց, թէ ի՞նչ է նշանակում այդ ձեռքը: Սա նախ ապահովութիւն խնդրեց իւր կեանքի համար և ապա բացատրեց այսպէս. Դա ծովի թագուհու ձեռքն է, նա ասում է, թէ ինչո՞ւ համար են քո այդ հալածանքները՝ քանի որ միայն հինգ օր պիտի ապրիս:

Աղէքսանդրը այս լսելով ասաց. «Եթէ հինգ օրից յետոյ կենդանի մնամ՝ կը հրամայեմ զլխատել քեզ, իսկ եթէ մեռնիմ՝ կարգադրում եմ, որ առատապէս վարձատրեն քեզ, միայն թէ այժմ այնպէս արա, որ անհետանայ այդ ձեռքը: Փրիզոն իմաստունը զնաց ձեռի մօտ, մեկնեց իւր ձեռը և մի մատը խփեց, արանով կամենալով ասել թէ ահա մի օրն անց կացաւ: Իսկոյն ծովի թագուհին էլ իւր մի մատը խփեց: Յետոյ Փրիզոնը երկրորդը խփեց, կամենալով ասել, թէ վաղն էլ երկրորդը կանցնի: Ծովի թագուհին նոյնը հաստատեց խփելով երկրորդ մատը: Վերջապէս Փրիզոնը մնացած երեք մատն էլ մէկ մէկ խփելով քաջեց ձեռը, կամենալով հասկացնել, թէ հինգ օրից յետոյ Աղէքսանդրը կանհետանայ: Ծովի թագուհին նոյնն արաւ՝ և ձեռքը սուզուեց ջրի մէջ, Այս տեսնելով Աղէքսանդրը հաւատաց Փրիզոնի գուշակութեան և կտակեց, որ եթէ, յիբաւի, հինգ օրից յետոյ մեռնի՝

իրեն հայրենիք տանին թաղելու։ Նա կարգադրեց նաև թագման հանդիսի կարգը. առաջից պիտի գնային զօրքերը, որոնց պիտի հետեւէին յաջորդաբար հոգևորականութիւնը, լալկան կանանց դասը և արքունի դանձերը կրող ծառաները։ Ամենից յետոյ պիտի տանէին իւր դագաղը, որից դուրս պիտի մնար իւր աջ ձեռք՝ օրօրուելով օգի մէջ։ Նա հրամայեց նաև որ վիշտ ունեցողները իւր հոգու հացից չուտնն։

Հինգ օրից յետոյ Աղէքսանդրը մեռաւ և նրա մարմինը տաբան հայրենիք նրա կտակած կարգաւորութեամբ, նրա մայրը ընդառաջ եկաւ և տեսնելով այս տարօրինակ յուղարկաւորութիւնը՝ բացատրութիւն խնդրեց իմաստուն Փրիզոնից։ Սա նրան պատասխանեց, թէ Աղէքսանդրը սրանով կամենում էր ասել, թէ եթէ հնար լինէր ուժով ազատուելու մահից, իւր այս անթիւ զօրքերը կը փրկէին նրա կեանքը. եթէ ազօթքը կարողանար հեռացնել մահուան արհաւիրքը, այսքան հոգևորականները կարող էին լսելի անել իրենց ձայնը Աստծուն. եթէ արցունքը կարողանային ողնչացնել մահուան դատաւէիտը, այնքան լալկան կանանց արցունքը բաւական կը լինէին. եթէ հարստութիւնը կարողանար գնել կեանքը՝ այնքան դանձերը լիովին բաւական կը լինէին։ Ուրեմն պարզ է՝ որ մահը մի ընդհանուր չարիք է, որին պէտք է անմոռանջ հպատակել, որովհետև զԱստուած տալիս է՝ Աստուած էլ առնում, և քանի որ այսքան վաղանցուկ է՝ հետեւապէս և շունայնութիւն ունայնութեան, ամենայն ինչ ունայնութիւն է։—Եւ այս է ասում Աղէքսանդրը իւր ձեռքը շարժելով։

Աղէքսանդրի մայրը լսելով այս բացատրութիւնը՝ դադարեց լաց լինելուց և սրբելով արցունքները՝ նստեց նրա հոգու հացն ուտելու։ Սակայն այստեղ յայտնեցին, որ Աղէքսանդրը ցանկացել է, որ իւր հոգու հացից զի մի վշտացող չուտէ։ Բոլոր յուղարկաւորողները յիշելով իրենց սիրելիների մահը՝ վեր կացան առանց մի կտոր հաց բերանները դնելու։ Թագուհին վերցրեց որդու դագաղը, փակուեց մի սենեակում և առանց ուտել խմելու սկսեց ողբալ։ Երեսուն և իննը օր նա ողբաց ծոմապահութեամբ։ Քառասներորդ օրը սաստիկ քաղց զգալով՝ վերև նայեց և տեսաւ, որ առաստաղից հաց է քաշ արած։ Հանեց որդուն ջախպից, դրեց գետնին, ջախպը յենեց պատին և վերև բարձրանալով՝ վերցրեց հացը և կերաւ, որովհետև սոված որդւոյնն ակաջներ չուներ։

Ե. Լ.